ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը միջազգային վերապատրաստման շաբաթվա մեկնարկին

Հարգելի՛ գործընկերներ

Հայաստանում «Էրազմուս+»-ի ազգային գրասենյակի համակարգող հարգելի՛ տիկին Կառլովա

Մինչ խոսքս սկսելը թույլ տվեք բոլորիդ ողջունել Հայաստանում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Հույս ունեմ, որ երեկ ձեզ համար կազմակերպված այցը դրական տպավորություններ է հաղորդել ձեզ Հայաստանի մասին: Կարծում եմ, դրանք էլ ավելի կամրապնդվեն առաջիկա օրերին, երբ ՀՊՏՀ աշխատակիցների կողմից ձեզ կառաջարկվի ճանաչողական ծրագիր՝ ձեր այցը Հայաստան և ՀՊՏՀ ավելի արդյունավետ ու հիշարժան դարձնելու համար:

2014 թվականից ի վեր, ինչ մեկնարկել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագիրը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն ակտիվորեն ներգրավված է ծրագրի տարբեր գործողություններում: Ուրախալի է նշել, որ հետզհետե մեծանում է ՀՊՏՀ ներգրավվածությունը փոխանակման ծրագրերում՝ ընդգրկելով բոլոր մակարդակները՝ ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակում:

Ժամանակի ընթացքում փորձում ենք նաև ընդլայնել բուհերի աշխարհագրությունն ու փոխանակման նոր հնարավորություններ առաջարկել եվրոպական տարբեր երկրներում: ՀՊՏՀ կողմից կազմակերպված սույն միջոցառումը ևս վկայում է այն մասին, որ մենք ջանք չենք խնայում հավուր պատշաճի իրականացնելու ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր գործողությունները:

Ես հույս եմ հայտնում, որ նոր ուսումնական տարում արդեն կհյուրընկալենք ձեր կողմից ներկայացվող բուհերի ուսանողներին: Նրանք Հայաստանից կհեռանան հարուստ գիտելիքներով և տպավորություններով:

Եվս մեկ անգամ ողջունում եմ բոլորիդ ՀՊՏՀ-ում և արդյունավետ աշխատանքային շաբաթ եմ մաղթում:

Հարգանքով՝
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ